Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(1 սեպտեմբերի, 2014թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում եւ շնորհավորում կրթության գործի նվիրյալներին, բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին Գիտելիքի օրվա առիթով:

Այսօր կրթական մեր բոլոր հաստատությունները դարձյալ իրենց լուսավոր հարկի ներքո են ընդունել մեր սիրասուն զավակներին՝ հրավիրելով քայլելու գիտելիքի ամբարման, հոգեւոր արժեքների ճանաչման եւ իմաստության ճանապարհներով: Մեր ժողովուրդը միշտ կարեւորել է գիտելիքը եւ ուսումը, որոնք առանցքային նշանակություն են ունեցել մեր կյանքում:

Այսօր եւս մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ քաղաքացու դերը, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ տունը շինվում է իմաստությամբ եւ հաստատվում հանճարով, եւ գիտությամբ են շտեմարանները լցվում ամենայն պատվական հարստությամբ եւ բարիքով (Առակներ 24:3-4):

Սիրելիներ, Մեր հայցն է առ Աստված, որ ուսման սերը անբաժան լինի մեր զավակների սրտերից, եւ ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն մեր մանկավարժների նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր ար-

ժեքներով դաստիարակության եւ մեր Հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ